26.08.2022թ.

ԱՃԹՆ ԲՇԽ քաղաքացիական հասարակության խմբակցության առաջարկություններն ու դիտարկումները

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության 4-րդ նախագծի վերաբերյալ

2. Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ներկա վիճակը

1. Ռազմավարության նախագծի 9-րդ էջում՝ հենց Հանքարդյունաբերության ոլորտի ներկա վիճակի նկարագրության մեջ ֆիքսված է, որ «հանքարդյունաբերությունը հասել է զարգացման մի փուլի, երբ ոլորտը բնութագրող ցուցանիշների աճի տեմպերը չեն արտացոլում երկրի հանքարդյունաբերական ռեսուրսների իրական ներուժի բացահայտման հնարավորությունը»: Սրանով միանգամից կողմնորոշում է տվյալ ոլորտի զարգացման ուղղությունը, այն է՝ բացահայտել և արդյունահանել իրական ներուժը՝ նորանոր ռեսուրսներ: Ընդ որում այդ միտքը չի համապատասխանում նաև հաջորդին, որն ավելի ճիշտ է տալիս իրավիճակից բխող ընտրությունը: **Առաջարկում ենք վերանայել կամ հանել նման հայտարարությունը:**

Ընդհանուր ակնարկ

2. Ռազմավարության նախագծի 9-րդ էջում՝ «Հաշվառված հանքավայրերի հանքաքարերում, բացի հիմնական մետաղներից, առկա են նաև ուղեկցող հազվադեպ և ցրված մետաղներ՝ ռենիում, սելեն, տելուր, կադմիում, ինդիում, գալիում, թալիում, բիսմութ և այլն, ընդ որում՝ սուլֆիդային հանքաքարերի կարևոր բաղադրամաս է կազմում ծծումբը» հատվածն **առաջարկում ենք համալրել ուղեկցող ռադիոակտիվ տարրերով (ուրան, թորիում), որոնք առկա են ընդերքում:**

2.1 Օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունքներ

3. Ռազմավարության նախագծի 13-րդ էջում նշված է. «Նմանատիպ իրավիճակ է դիտարկվում նաև մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտում: 31.12.2016 դրությամբ ընդերքօգտագործման իրավունք է ունեցել 30 ընկերություն, մինչդեռ 31.12.2021 դրությամբ այս թիվը նվազել է մինչև 22-ի»: **Հանքարդյունաբերության ոլորտի խնդիրների և վիճակի մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար առաջարկում ենք նշել ընդերքօգտագործման իրավունքների նվազման պատճառները:**

2.5 Պետության եկամուտներ

4. Ռազմավարության նախագծի 13-րդ էջում նշված է. «Պետության եկամուտներ: Ըստ ՊԵԿ պաշտոնական վիճակագրության՝ 2020 թ.-ին մետաղական օգտակար հանածոների արդյունահանմամբ զբաղվող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները կազմել են 82.2 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով մոտ 3.5%-ով նախորդ տարվա նկատմամբ (տվյալները չեն ներառում ԱԱՀ-ի գծով պետության եկամուտները)»: **Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը պետք է հիմնված լինի տարբեր ասպեկտների, այդ թվում պետբյուջե հարկային մուտքերի խորը ուսումնասիրության վրա, այլ ոչ ընդամենը մեկ տարվա համեմատության վրա: Ընդամենը մեկ տարվա կտրվածքով համեմատությունը ցույց չի տալիս պետբյուջեում ոլորտի վճարած հարկերի աճման կամ նվազման դինամիկան, և հնարավոր չէ, մեկ տարվա կտրվածքով համեմատություն անելով, ոլորտի խնդիրների ավելի ճշգրիտ վերլուծություն անել, ռազմավարության մեջ դրանց համար լուծումներ առաջարկելու համար հատկապես այն դեպքում, երբ վերջին 5 տարվա ընթացքում ընդերքօգտագործման իրավունքների թիվը նվազել է: Առաջարկում ենք տվյալները նշել առնվազն 5 տարվա կտրվածքով՝ 2016-2021 թվականների համար:**

5. Ռազմավարության նախագծի 13-րդ էջում նշված է. «Պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտից պետության եկամուտները 2021 թ.-ին կազմել են 6.8 մլրդ ՀՀ դրամ, ինչը 24%-ով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից (տվյալները չեն ներառում ԱԱՀ-ի գծով պետության եկամուտները)»: **Առաջարկում ենք ներկայացնել տվյալներ առնվազն 5 տարվա կտրվածքով՝ 2016-2021 թվականների համար: Հիմնավորումը՝ 4-րդ կետում:**

6. Ռազմավարության նախագծի 13-րդ էջում նշված է. «Ստորերկրյա ջրեր արդյունահանող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարած հարկերի և վճարների ծավալը 2019 թ.-ին կազմել է 3.8 մլրդ ՀՀ դրամ՝ գրանցելով 10.8% աճ նախորդ տարվա նկատմամբ: Եկամուտների մեծ մասը կազմել են եկամտային հարկը և ակցիզային հարկը»: **Առաջարկում ենք ներկայացնել տվյալներ առնվազն 5 տարվա կտրվածքով՝ 2016-2021 թվականների համար: Հիմնավորումը՝ 4-րդ կետում:**

7. Ռազմավարության նախագծի 13-րդ էջում նշված են հանքարդյունաբերության վերաբերյալ հարկային/վճարային տվյալները: **Ոլորտի արդյունավետության վերաբերյալ առավել ամբողջական պատկեր ստանալու համար խնդրում ենք ավելացնել համեմատություն այլ ոլորտների հետ:**

2.6 Զբաղվածություն

8. Ռազմավարության նախագծի 14-րդ էջում նշված է հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածությունը: **Առավել ամբողջական պատկեր ստանալու համար խնդրում ենք ավելացնել համեմատություն այլ ոլորտների հետ, որպեսզի նաև հասկանալի դառնա թե հանքարդյունաբերության զարգացումը որ ոլորտների վրա կարող է ազդել:**

   Բացի այդ, հաշվի առնելով ներկայացվող թվային տվյալները, ամբողջական պատկեր ստանալու համար առաջարկում ենք գնահատել և ավելացնել պետության համար տնտեսական/բնապահպանական/սոցիալական վնասների վերաբերյալ տվյալներ:

2.8 Տնտեսական բազմապատկիչ (մուլտիպլիկատոր)

9. Ռազմավարության նախագծի 15-րդ էջում նշված է. Վերը նշված ՀՆԱ բազմապատկչի հիման վրա հաշվարկների իրականացման արդյունքում ստացվում է, որ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի ընդհանուր ներդրումը ՀՀ ՀՆԱ-ի մեջ 2021 թ.-ի համար կազմում է 11%, որից մոտ 6%-ը բուն ոլորտի ուղղակի ներդրումն է, իսկ մոտ 5%-ը՝ անուղղակին»: **Առաջարկում ենք 5 տարվա՝ 2016-2021 թվականների կտրվածքով ցույց տալ ՀՆԱ-ում հանքարդյունաբերության ներդրումը, այլ ոչ միայն 2021թ-ի: Հիմնավորումը՝ 4-րդ կետում:**

<u>3. Հանքարդյունաբերության ոլորտի նվաճումները, առկա հիմնախնդիրներն ու բարեփոխման հնարավորությունները</u>

10. Ռազմավարության նախագծի 15-րդ էջում Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (SWOT) վերլուծության մեջ թույլ կետերից «Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման հիմնախնդիրներ» 11-րդ կետի երկրորդ սյունյակի վերջին պարբերությունում գրված է. «Սոցիալական կառավարման, ազդեցությունների պատշաճ գնահատման և մեղմացման միջոցառումների կիրառման անհամապատասխանություն միջազգային լավագույն փորձին»: **Այս պարբերությունից հետո առաջարկում ենք նշել. «Համայնքին, բնակչին պատճառված վնասի փոխհատուցման, ապահովագրության մշակույթի բացակայություն: Առողջության, կամ արտադրական վթարներից գյումթերքի, հողի ապահովագրման մեխանիզմի բացակայություն»:**

11. Ռազմավարության նախագծի 17-րդ էջում Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (SWOT) վերլուծության մեջ թույլ կետերից «Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման հիմնախնդիրներ» բաժնում **առաջարկում ենք ամրագրել հանքարդյունաբերության տարբեր ազդեցությունների (էկոհամակարգերի, մարդու առողջության վրա,**

տարածքների այլընտրանքային զարգացման բաց թողնված հնարավորությունների և այլն) գնահատականների պակասը, ինչպես նաև դրանից բխող՝ հանքարդյունաբերության օգուտ-վնասների իրական պատկերը: Միայն օգուտների մասին ենք տեղեկացված, իսկ վնասները չեն գնահատվում և չեն ներկայացվում:

12. Ռազմավարության նախագծի 18-րդ էջում Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (SWOT) վերլուծության մեջ թույլ կետերից 14-րդ՝ «Համակենտրոնացում» կետում նշված է, որ «Փոքր է այն հանքերի թիվը, որոնք կարող են համարվել միջին: Մետաղական և ոչ մետաղական հանածոների արդյունահանման բնագավառում շատ են փոքր հանքերը, որոնց ազդեցությունը ազգային բարեկեցության վրա բավականին աննշան է:» Սա հակասում է Ուժեղ կողմերի 3-րդ կետին «Որոշ օգտակար հանածոներիի պաշարների հարստությամբ ու բազմազանությամբ աշխարհում առաջատար դիրք»: Իրականում 14-րդ կետը ճիշտ է, **և առաջարկում ենք վերանայել վերևում 3-րդ ուժեղ կողմի նկարագրությունը:**

13. Լրջագույն խնդիր է հանքարդյունաբերող ընկերությունների մեծ մասի օֆշորային գոտիներում գրանցված լինելը, ինչի պատճառով բացակայում է դրանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը: Նմանապես, խնդրահարույց է բորսաներում ցուցակված ընկերությունների մասին տվյալների բացակայությունը, որտեղ պետությունը չի տեսնում, թե ովքեր են իրական շահառուները, ինչը նաև կարող է ազգային անվտանգության խնդիր ստեղծել: Խնդիր է նաև ընկերությունների մեծ մասի ծագման երկիրը, տվյալ դեպքում՝ Ռուսաստանը, ինչը կարող է ավելորդ կախվածություն և քաղաքական ազդեցությունների համար հիմքեր ստեղծել: **Առաջարկվում է ավելացնել այս խնդիրները թույլ կողմերի ցանկում:**

14. Ռազմավարության նախագծի Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (SWOT) վերլուծության մեջ «Հնարավորություններ» բաժնում (էջ 21)՝ 4-րդ՝ ««Կանաչ» տնտեսության աճին աջակցություն և շուկայի աճող պահանջարկից օգտվելու հնարավորություն» կետի 2-րդ սյունակում, նշված է. «Կանաչ տնտեսությունը ենթադրում է տեխնոլոգիաներ, որոնք պահանջում են մի քանի անգամ ավելի շատ մետաղներ և հանքանյութեր, քան ավանդական տնտեսությունը: Առանց օգտակար հանածոների ծավալների աճի հնարավոր չէ իրականացնել անցումը կանաչ տնտեսության: Թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրները դիտարկում են ներդրումների ներգրավումը այս համատեքստում՝ պահանջարկի աճից օգտվելու նպատակով: Անցումը կանաչ տնտեսությանը ցանկացած երկրի համար ծախսատար և տեխնոլոգիապես հագեցած գործընթաց է: Առանց տնտեսության մեջ զգալի միջոցների ներդրման երկիրը չի կարող անցում կատարել կանաչ տնտեսության»:

Կանաչ տնտեսություն զարգացնելու պատրվակով Հայաստանի փոքր տարածքում հանքարդյունաբերությանը զարկ տալու քաղաքականություն որդեգրելն անհիմն է: Ռազմավարության մեջ չկա հավասարակշռված մոտեցում, հաշվարկ և գնահատական, թե ինչ կշահի կամ կկորցնի երկիրը՝ նման «կանաչ» անցման համար մետաղների արդյունահանումն ավելացնելով: Հանքարդյունաբերությունն ինքնին «գորշ տնտեսության» ճյուղ է և չի կարող ունենալ «կանաչ» ազդեցություն: **Առաջարկում ենք այս «հնարավորությունը» վերանայել և հանել:**

15. Ռազմավարության նախագծի Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (SWOT) վերլուծության մեջ «Սպառնալիքներ» բաժնում (էջ 23)՝ 2-րդ՝ «Հանրային բացասական ընկալում» կետում նշված է, որ «զարգացած հանքարդյունաբերությամբ երկրների փորձը վկայում է, որ ոլորտի հանդեպ վստահությունը և հանրային վերաբերմունքը հնարավոր է փոխել ոլորտի՝ ԲՍԿ սկզբունքներին համապատասխան կառավարման, լիարժեք վերահսկողության և ոլորտի վերաբերյալ պատշաճ իրազեկման միջոցով»: Հարկ է նշել, որ լիարժեք վերահսկողությունը և պատշաճ իրազեկումը վերաբերմունք չեն փոխի, եթե ի սկզբանե քաղաքացիների կարծիքը իրենց համայնքում ընդերքօգտագործման թույլտվությունների տրման գործընթացում անտեսվի: **Առաջարկում ենք վերագնահատել հանրության դիրքորոշումների պատճառները՝ ծագող խնդիրներին համապատասխան արձագանք ձևավորելու նպատակով:**

4. Հանքարդյունաբերության ոլորտի տեսլականն ու զարգացման ուղենիշային սկզբունքները

Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի տեսլական

16. Ռազմավարության նախագծի «Հանքարդյունաբերության ոլորտի տեսլական» բաժնում նշված է. «Այն թույլ կտա իրացնել երկրի բնական պաշարների ներուժը՝ առավելագույն սոցիալ-տնտեսական օգուտների ստացման, դրանց արդյունավետ բաշխման և երկարաժամկետ կայուն զարգացման ակնկալիքով»: **Առաջարկում ենք ավելացնել շրջակա միջավայրի և մարդու առողջության համար հնարավոր վնասների կանխման ու չեզոքացման և ազդակիր համայնքներին հասցվող վնասների փոխհատուցման ակնկալիքները:**

Ուղենիշային սկզբունքներ

17. Ռազմավարության նախագծի 27-րդ էջում 1-ին ուղենիշային սկզբունքում նշված է, որ Հայաստանի Հանրապետության ընդերքում առկա օգտակար հանածոների պաշարները պետք է ծառայեն ներկա և ապագա սերունդներին: Այն նշում է. «Ընդերքում առկա օգտակար հանածոները գրեթե ամբողջությամբ, բացառությամբ ջրի և գետային ավազաններում առկա ավազի, չվերականգնվող են: Հետևաբար, կարևոր է, որ առկա պաշարների օգտագործմանը զուգընթաց իրականացվի նոր պաշարների հայտնաբերում՝ նախադրյալներ ստեղծելով ապագա սերունդներին

պաշարներով ապահովելու գործընթացի համար: Այս ամենը հնարավոր է իրականացնել ռացիոնալ և արդյունավետ օգտագործելով պաշարները ներկայում, և դրանցից գոյացած մուտքերից շահաբաժիններ ապահովելով ապագա սերունդների համար»: Նախ անհասկանալի է, թե ինչ շահաբաժնի մասին է խոսքը: Երկրորդ, առաջարկվող՝ արագ-արագ արդյունահանելու և միաժամանակ նոր պաշարներ հայտնաբերելու մոտեցումը չի համապատասխանում ռացիոնալ և արդյունավետ օգտագործման սկզբունքին: Ընդերքի ռեսուրսները ոչ միայն չվերականգնվող են, այլև անսպառ չեն, իսկ առաջարկվող մոտեցման արդյունքում 1-2 սերունդ հետո հանքահումքային պաշարները կարող են ամբողջությամբ սպառվել: **Առաջարկում ենք վերանայել հակասական մտքերն ու խնդրահարույց մոտեցումները: Նաև առաջարկում ենք նշել, թե ինչ է ռազմավարությունն առաջարկում ապագա սերունդներին այն պարագայում, եթե նոր պաշարներ չհայտնաբերվեն, կամ հայտնաբերվածի շահագործումը տնտեսապես շահավետ չլինի:**

18. Ռազմավարության նախագծի 27-րդ էջում՝ 2-րդ ուղենիշային սկզբունքում, նշված է. «Ընդերքը շահագործում են ֆինանսապես և տեխնիկապես կարող ընկերությունները, սակայն ընդերքի շահագործումից ստացված օգուտները պետք է հասանելի լինեն ողջ հասարակությանը»: Հայաստանում ընդերքօգտագործման իրավունքներ տրվել են նաև այնպիսի ընկերութունունների, որոնք կարճ ժամանակ անց սնանկ են ճանաչվել: **Առաջարկում ենք վերանայել այս հատվածը և նաև հստակեցնել, թե ինչ ի նկատի ունեք շահագործումից ստացված օգուտ ասելով և ինչ մեխանիզմով է այն հասանելի լինելու հասարակությանը:**

19. Ռազմավարության նախագծի 3-րդ ուղենիշային սկզբունքում (27-28 էջեր) նշված է. «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բարեփոխումների արդյունքում ակնկալվում է, որ ոչ միայն կմեղմացվեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները, այլ նաև աստիճանաբար կստեղծվեն դրական բնապահպանական և սոցիալական ազդեցություններ: Այս դրական ազդեցությունները պետք է հանրագումարով գերազանցեն բացասական ազդեցությունները, որպեսզի երկրում գրանցվի զուտ դրական ազդեցություն»: **Ի՞նչ մեխանիզմով է դրական բնապահպանական ազդեցություն ստեղծվելու: Սա անհավանական երազանք է: Առաջարկում ենք հանել:**

20. Ռազմավարության նախագծի 3-րդ ուղենիշի նկարագրության 2-րդ պարբերությունում նշված է «Հանքարդյունաբերության ոլորտի խնդիրը ոչ միայն բացասական ազդեցությունները մեղմելն է, այլ նաև զուտ դրական ազդեցություններ ձևավորելը»: Սա չի համապատասխանում իրականությանը: Կառավարությունը երբևէ ջանքեր չի թափել բացասական ազդեցությունները մեղմելու ուղղությամբ: **Առաջարկում ենք հանել այս անհիմն պնդումը:**

21. Ռազմավարության նախագծի 3-րդ ուղենիշի նկարագրության 3-րդ պարբերությունում գրված է. «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բարեփոխումների արդյունքում ակնկալվում է, որ ոչ միայն կմեղմացվեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները, այլ նաև աստիճանաբար կստեղծվեն դրական բնապահպանական և սոցիալական ազդեցություններ»: Առնվազն բնապահպանական առումով սա անհիմն և անտրամաբանական է: Ինչ վերաբերում է սոցիալականին, դա հարաբերական է, քանի որ աշխատատեղեր ստեղծելուն զուգընթաց ձևավորվելու են առողջապահական, գյուղատնտեսական, սննդի անվտանգության ռիսկեր: **Առաջարկում ենք հանել այս անհիմն պնդումը:**

22. Ռազմավարության նախագծի 4-րդ ուղենիշը սահմանում է, որ «Հանքարդյունաբերության ոլորտը պետք է դիտարկի այլընտրանքային գործունեության դեպքում ձևավորվող արժեքը»: Այս ուղենիշը խիստ համառոտ է նկարագրված, մինչդեռ հիմնական խնդիրը հենց այդտեղ է: Մինչև ընդերքի ռեսուրսը շահագործելու վերաբերյալ գաղափարը գեներացնելը/դիտարկելը (այսինքն՝ պաշտոնական որոշում ընդունելուց շատ ավելի վաղ) հարկավոր է հասկանալ տնտեսության առկա մյուս ոլորտների վրա ինչ ազդեցություն կլինի, կամ, նույնիսկ եթե առկա չէ զարգացած ոլորտ, տվյալ տարածքը ինչպիսի այլընտրանքային զարգացման հնարավորություն կարող էր տալ (գյուղատնտեսություն, հնավայրի զբոսաշրջություն, առողջապահություն), որոնք են այդ կորսված հնարավորությունները: Այդ առումով, վերնագիրը սխալ է ձևակերպված: **Առաջարկում ենք վերաձևակերպել ուղենիշը: Այն պետք է լինի ոչ թե «Հանքարդյունաբերության ոլորտը պետք է դիտարկի այլընտրանքային գործունեության դեպքում ձևավորվող արժեքը», այլ «Ընդերքի ուսումնասիրման և շահագործման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է դիտարկվի տարածքի այլընտրանքային զարգացման հնարավորությունները»:**

23. Ռազմավարության նախագծի 6-րդ ուղենիշով սահմանվում է, որ «Հանքարդյունաբերության ոլորտում պետք է հստակ սահմանված լինեն մասնակիցների դերերն ու գործունեության կանոնները»: Ընդ որում նկարագրությունից այնպիսի տպավորություն է, որ բոլոր դերակատարները՝ պետությունը, հանքարդյունահանող ընկերությունները, ներդրողները, համայնքները, գիտակրթական անձնակազմը, ծառայություններ մատուցողները պետք է ունենան հավասար կշիռ ու նշանակություն պետության համար: Պետությունն առաջին հերթին իր քաղաքացիներինն է, որոնք ապրում են իրենց բնակավայրերում, ընդ որում, շատերը՝ իրենց նախնիների/բնիկ տարածքներում: Նրանց բարենպաստ կենսամիջավայրում ապրելու և բարգավաճելու իրավունքը որևէ կերպ չպետք է ստորադասվի որևէ հանքարդյունաբերության կամ այլ տնտեսական գործունեության, որի շահառուները առավել փոքր խումբ մարդիկ են, այն էլ կարճաժամկետ: **Առաջարկում ենք, և կարևոր է, որ հանքարդյունաբերության զարգացման ռազմավարությունը շեշտի**

ազդակիր համայնքներում բնակվող քաղաքացիների շահերի առավելությունը և նրանց համար բարենպաստ կենսամիջավայր և բարեկեցություն ապահովելու առաջնահերթությունը: Շահերի հակասությունների դեպքում միանշանակ պետք է գերակշռի քաղաքացիների շահը, ինչը նաև կապահովի այդ տարածքում սերունդների գոյատևումը:

24. Ռազմավարության նախագծի 8-րդ ուղենիշով սահմանվում է, որ «Հանքարդյունաբերության ոլորտը պետք է առաջնորդվի կայուն զարգացման օրակարգով»: Սա ընդհանրապես սկզբունք չէ և հակասում է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին: Այն, նաև ներկայացված ռազմավարության համատեքստում, ամբողջությամբ դեկլարատիվ է և հիմնավորված չէ: Առաջին հերթին, որևէ վերլուծություն չկա, և հանքարդյունաբերության զարգացման հեռանկարը Հայաստանում և դրա հնարավոր սպառնալիքները չեն համեմատվել համապատասխան փոքր տարածք, խոցելի լանդշաֆտ, հարուստ կենսաբազմազանություն ունեցող երկրների հետ: Կանադա, Ավստրալիա, Չիլի, Շվեդիա, Մոնղոլիայի օրինակները շատ հետաքրքիր և ուսանելի են, բայց դրանք բացարձակապես համոզիչ և ընդունելի չեն: Չնայած այս առաջարկը ներկայացվել է ռազմավարության փաստաթղթի մշակման գործընթացի վաղ փուլերից, այն անտեսվել է: **Ուստի, կրկին առաջարկում ենք փաստաթղթում ներկայացնել օրինակներ, որոնք համադրելի են հայաստանյան համատեքստին և համապատասխանաբար վերանայել մի շարք մոտեցումներ:**

Ռազմավարության իրագործման ուղիներ

25. Ռազմավարության նախագծի 27-րդ էջում ռազմավարության իրագործման 1-ին ուղու նկարագրության մեջ նշված է «Միևնույն ժամանակ արտասահմանյան ներդրողները նախքան ներդրում կատարելու որոշում ընդունելը կարևորում են ոչ միայն օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի ծախսային ու եկամտային կողմը, այլ նաև բնապահպանական և սոցիալական կառավարման հիմնահարցերը»: Նման պնդում կարելի է թերևս անել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) անդամ երկրների ընկերությունների մասին, որոնք պարտավոր են առաջնորդվել բարձր ստանդարտներով: Մյուսների պրակտիկան գլոբալ մակարդակով հակառակն է ցույց տալիս: Բացի այդ, հանքարդյունաբերության բնապահպանական և սոցիալական հիմնահարցերը գնահատելը/կարևորելը, առաջին հերթին, պետության պարտականությունն է: Նախքան որոշելը, որ այս կամ այն հանքավայրը պետք է շահագործվի և ներդնող հրավիրելը, պետությունը պետք է նախ գնահատի (այդ թվում՝ ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) մոտեցմամբ), թե տվյալ հանքի շահագործումը ինչ օգուտ/վնաս կտա, ինչ այլընտրանքային զարգացման հնարավորություններ կկորցնենք: **Առաջարկում ենք նշված անհիմն պնդումը ներդնողների մասին վերանայել:**

26. Ռազմավարության նախագծի 30-րդ էջում ռազմավարության իրագործման 2-րդ ուղու նկարագրության մեջ նշված է, որ «Հանքարդյունաբերության հանդեպ բացասական և գիտականորեն չհիմնավորված մեղադրանքների տարածումը կանխելու համար կարևոր խնդիր է նաև պատկան մարմինների կողմից հանրության իրազեկումը՝ իրական խնդիրները չհիմնավորված ընկալումներից տարանջատելու ուղղությամբ»: Այնպիսի տպավորություն է, որ խնդիրների հիմնական մասը գալիս է հանքարդյունաբերության օգուտների մասին քաղաքացիների տեղյակ չլինելուց: Իսկ արդյո՞ք պետությունն իրականացնում է սեփական մոնիտորինգ/ուսումնասիրություններ, և ինքն ունի՞ պատկերացում տարբեր մարզերում հիվանդացությունների վերաբերյալ, և ո՞րն է դրանց վերաբերյալ իր տվյալները, վերլուծությունն ու միջմարզային տվյալների համեմատությունների իր վարկածը: Ի՞նչ տվալների և գիտելիքի հիման վրա է պետությունն իրականացնելու իրազեկում վնասների բացակայության մասին: **Առաջարկում ենք վերանայել պետական մարմինների և ՏԻՄ-երի կողմից չհիմնավորված որոշումների ընդունումն և անպատասխանատու հանքարդյունաբերությունը քաղաքացիների իրազեկ չլինելու գործոնով փոխարինելու մոտեցումը: Փոխարենը, հարկավոր է նախատեսել համապարփակ գիտահետազոտական հենքի ձևավորում/ամրապնդում, առողջապահության վերահսկողական մեխանիզմների ստեղծում և վերլուծությունների հանրամատչելիության ապահովում:**

27. Ռազմավարության նախագծի 30-րդ էջում **«Ռազմավարության իրագործման ուղիներ ենթաբաժնի 2 կետի գ ենթակետից հետո առաջարկում ենք ավելացնել դ ենթակետ հետևյալ բովանդակությամբ. «Ներդրվել է վնասի փոխհատուցման և ապահովագրության մեխանզմ»**:

28. Ռազմավարության իրագործման ուղիների 2-րդ կետում նշված է. «Հետևաբար, հնարավոր բացասական ազդեցությունները նվազեցնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու հետ կապված հարակից ծախսերը կարելի է դիտարկել որպես ապագայի համար ներդրում: Կառավարության և հանքարդյունահանող ընկերությունների կողմից ճիշտ կառավարման դեպքում այս ծախսերը Հայաստանում հետագա սերունդների կայուն զարգացման համար կդառնան ներդրում»: Անհասկանալի է, ի՞նչ ներդրման մասին է խոսքը, եթե այս ոլորտը միայն բացասաբար է ազդում մարդու առողջության և իր կենսամիջավայրի վրա, ինչը, բնականաբար, բացասական ազդեցություն է ունենալու ապագա սերնդի և գենոֆոնդի վրա: Այսօր երեխաների մազերում մկնդեղ, սնդիկ և ծանր մետաղներ են հայտնաբերվում, ապագա սերնդի ի՞նչ հոգածության մասին է խոսքը: **Առաջարկում ենք հանել նշված նախադասությունը:**

29. Ռազմավարության նախագծի 30-րդ էջում նշված է. «Հաշվի առնելով վերոնշյալը՝ Կառավարությունը պետք է ստանձնի պատասխանատվություն շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցության նվազեցման համար և ՇՄԱԳ գործընթացի շրջանակում նախատեսի համայնքի առողջության ազդեցության ռիսկերի

գնահատում»: **Առաջարկում ենք «Կառավարությունը պետք է ստանձնի պատասխանատվություն շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցության նվազեցման համար» հատվածը փոխարինել հետևյալ տարբերակով. «Կառավարությունը և ընդերքօգտագործող ընկերությունները պետք է ստանձնեն պատասխանատվություն շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցության նվազեցման համար»:**

30. Ռազմավարության նախագծի 30-րդ էջում նշված է. «Այսպես, օրինակ, Հայաստանում տարածված է պոչամբարի՝ որպես քաղցկեղի առաջացման պատճառի ընկալումը: Մինչ պոչամբարի պատշաճ կառավարումը անքննելի անհրաժեշտություն է, գոյություն չունի նման որևէ գիտական ապացույց դրանց միջև կապի վերաբերյալ: Պետական համապատասխան կառույցները պետք է ջանքեր գործադրեն բնակչության իրազեկման համար, այդ թվում՝ պատշաճ կառավարման արդյունքում հանքարդյունաբերության հետ կապված առողջապահական որևէ խնդիր բացառելու գործնականում ապացուցված հնարավորության մասին հանրությանը կրթելու ուղղությամբ»: **Առաջարկում ենք այս հատվածը հանել կամ վերախմբագրել: Գիտական գրականությունը փաստում է առողջության վրա ծանր մետաղների քաղծկեղածին ազդեցության մասին: Իսկ պոչամբարները կուտակում են ծանր մետաղներով պոչանքներ: Ծանր մետաղները արտանետումների, արտահոսքերի արդյունքում, օդի, ջրի գյուղմթերքի միջոցով հայտնվում են մարդու օրգանիզմում՝ նպաստելով հիվանդությունների առաջացմանը:**

31. Ռազմավարության նախագծի 31-րդ էջում նշված է. ««Կանաչ» տեխնոլոգիաների մշակման համար կարևոր են արդյունահանվող այնպիսի օգտակար հանածոներ, ինչպիսին են պղինձը, ցինկը և այլն, որոնք օգտագործվում են էլեկտրատեխնիկայի, գիտատար ու տեխնոլոգիատար այլ բնագավառներում: Միևնույն ժամանակ, ոլորտն, ինքնին, սեփական նպատակներով էներգիայի օգտագործման հետևանքով ածխածնային հետք է թողնում»**: Առաջարկում ենք հաշվի առնել նաև հետևյալ գործոնները: Հանքարդյունաբերություն ինքնին նպաստում է ջերմոցային գազերի արտանետումներին: Հանքարդյունաբերությունը նպաստում է հողերի դեգրադացիային, իսկ հողերի դեգրադացիան առաջացնում է ոչ միայն անապատացում, այլև հողերում ածխածնի պահպանման հնարավորության թուլացում: Այդպիսով մեծանում է ջերմոցային գազերի տարածումը մթնոլորտում:** http://www.ysu.am/files/6-1539672709-.pdf **Բացի այդ, ածխածնային հետքի վրա հանքարդյունաբերություն ազդում է նաև իրականացրած անտառահատումներով: Դեռևս հատված անտառներին համարժեք անտառներ հանքարդյունաբերողները չեն ստեղծել:**

32. Ռազմավարության նախագծի 31-րդ էջում նշված է. «Կառավարությունն անցում է կատարում ընդերքօգտագործման առանձին փուլերի միկրոկառավարումից դեպի

ընդերքօգտագործող կազմակերպություններին աջակցության տրամադրում՝ գործընթացներից անցում կատարելով վերջնարդյունքների սահմանման»: **Առաջարկում ենք, որպեսզի բոլոր փուլերում պետությունն ունենա վարչարարության, վերահսկողության գործառույթ:**

33. Ռազմավարության նախագծի 32-րդ էջում նշված է. «Հանքարդյունաբերություն, որն ապահովում է համընդհանուր կայուն զարգացման հնարավորություններ: Ինչպես նշված է ուղենիշային սկզբունքներում, կայացած հանքարդյունաբերությունը պետք է նպաստի երկրի տնտեսական աճին, համայնքների և տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը»: **Առաջարկում ենք վերանայել և հստակեցնել, թե հանքարդյունաբերությունն ինչպե՞ս է նպաստելու տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը, այդ թվում՝ գյուղատնտեսության: Դեռևս հանքարդյունաբերությունը միայն խոչընդոտել է գյուղատնտեսությանը:**

5. Ռազմավարական նպատակներ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1.

34. Ռազմավարական նպատակ 1-ի առկա խնդիրների շարքում նշված է, որ «Մասնավոր դեպքում պետության կողմից ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի կամ ցանկացած այլ դրամաշնորհային ծրագրերով ֆինանսավորված երկրաբանական աշխատանքների արդյունքները ֆոնդին չեն հանձնվում, աշխատանքները չեն հաշվառվում և այլն»: Այս խնդրի լուծման ուղղությամբ որևէ միջոցառում ներկայացված չէ: **Առաջարկում ենք ավելացնել միջոցառում/գործողություն/արդյունք, որն ապահովի մասնավորի կողմից սեփական կամ համատեղ երկրաբանական աշխատանքների արդյունքների պարտադիր փոխանցումը Հանրապետական երկրաբանական ֆոնդին:**

35. Անհրաժեշտ գործողությունների համառոտ նկարագրում նշվում է, «որ երկրաբանական տեղեկատվության որակի բարելավման նպատակով հարկ է իրականացնել մի շարք գործողություններ, մասնավորապես՝ ստեղծել, վարել, տնօրինել և պահպանել ընդերքօգտագործման ֆոնդի և երկրաբանական տեղեկության միասնական համակարգ՝ ռեսուրսների և պաշարների թվային կադաստր» և այլն: **Առաջարկվում է հստակեցնել, որ ընդերքօգտագործման ֆոնդի տվյալները պետք է լինեն էլեկտրոնային, հրապարակային, որոնման հնարավորությամբ:**

36. Առկա են դեպքեր, երբ հանքավայրերի պաշարների վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները փոխվել են՝ առանց պատշաճ հիմնավորելու կամ հանրությանը ներկայացնելու դրա պատճառները: Կամ հանքավայրերը բացվել են՝ աղտոտելով բնությունը, հետո պարզվել է, որ բավարար

պաշար չկար: **Առաջարկում ենք հստակեցնել, որ ֆոնդում պետք է պահվեն հանքավայրերում տարբեր տարիներին իրականացված ուսումնասիրությունների արդյունքները և համապատասխան վերլուծություններն ու եզրահանգումները, թե ինչի հիման վրա են փոխվել տվյալները:**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2.

37. Անհրաժեշտ գործողությունների համառոտ նկարագրում նշված է. «Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները սահմանամերձ գոտիներում խթան կհանդիսանան սահմանամերձ գյուղերում բնակչության ամրապնդմանը և արդյունքում՝ սահմանի պահպանմանը»: Այս գաղափարը հիմնավորված չէ և դրա հետևանքները/նպատակահարմարությունը պատշաճ գնահատված չեն: Հայաստանյան ներկայիս պրակտիկաների համապատասխան հանքարդյունաբերությունը ինչ որ համայնքներում կարող է զարգանալ ու սկզբում խթան կհանդիսանան, հետո, երկարաժամկետ, որ ռեսուրսը վերջացավ, դրանք կամայական, ինչը ռիսկեր կստեղծի ազգային անվտանգությունը: Նաև հաշվի առնված չեն հանքարդյունաբերության անդրսահմանային ազդեցությունների ռիսկերի ու հնարավոր պատասխանատվությունը մեր երկրի համար: **Առաջարկում ենք հանել տվյալ միտքը:**

38. Միջոցառումների չիրականացման հետևանքների բաժնում նշված չեն որևէ սկզբունքներ, առավել ևս որ ուսումնասիրությունների արդյունքում արդյունաբերական պաշարներ հայտնաբերելու դեպքում, հանքավայրերը, ամենայն հավանականությամբ, ենթակա են լինելու շահագործման: **Առաջարկում ենք նոր հանքավայրեր փնտրելու գործընթացում ամրագրել սահմանափակող սկզբունքներ և առանձին տեղանքներ (օրինակ՝ անտառներ, հատուկ պահպանվող տարածքներ, հնագիտանական տարածքներ, կենդանիների միգրացիոն գոտիներ, պատմամշակութային միջավայր, քաղաքներ) պարզապես հանել ցանկից: Դրանք կարելի է թողնել հաջորդ սերունդներին, երբ երկրում կգործեն օրենքները, համապատասխան ինստիտուտները, կհաստատվի պետության կողմից պատշաճ վերահսկողություն, կլինեն իսկապես մաքուր և մաքսիմալ հանքանյութ կորզող տեխնոլոգիաներ:**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 5.

39. Այս ռազմավարական նպատակն՝ իրականում, երկարաժամկետ առումով, ամենաճակատագրականն է Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման և քաղաքացիների բարեկեցության համար: **Ուստիև ռազմավարությունը պետք է որդեգրի հստակ մոտեցում/սկզբունք, որ մինչև չիրականացվեն այս նպատակի իրականացման համար սահմանված գործողությունները (առնվազն՝ հիմնական՝ ՇՄԱԳ-ին վերաբերող մասը), ինչպես նաև**

հաջորդ որոշ նպատակներին միտված միջոցառումներ (օրինակ՝ պոչամբարների կառավարում, լքված հանքերի փակում, պատշաճ վերահսկողություն և այլն), երկիրը չպետք է ջանք թափի լրացուցիչ ներդրողներ ներգրավելու և նոր հանքավայրերի շահագործման թույլտվություններ տալու ուղղությամբ:

40. Հայաստանում բնապահպանական փորձաքննության/ՇՄԱԳ-ի գործընթացն ունի մի շարք բացեր, որոնք չեն նպաստում կայուն զարգացման օրակարգի իրականացմանը: Չի իրականացվում օգուտների և ծախսերի գնահատում, այդ համատեքստում հաշվի չեն առնվում այնպիսի ծախսեր/վնասներ, ինչպիսիք են տարածքի այլընտրանքային զարգացման (գյուղատնտեսություն, առողջարանային տուրիզմ, հնեաբանական տուրիզմ, էկոհամակարգային ծառայություն) տեսանկյունից կորսվող հնարավորությունները, կուտակային/գումարային վնասները շահագործման բոլոր տարիների ընթացքում: Այդպիսով, հանքավայրերի շահագործման վերաբերյալ որոշումներն ընդունվում են՝ հաշվի առնելով միայն ձեռնարկողի օգուտներն ու պետության եկամուտները՝ առանց կազմելու տնտեսական գործունեության ամբողջական պատկերը: **Առաջարկվում է ստեղծել օգուտ-ծախսերի հաշվարկի մեթոդաբանական և ինստիտուցիոնալ և որոշումներն ընդունել բացառապես համապարփակ հաշվարկների համատեքստում՝ օգուտների-ծախսերի պատշաճ համադրմամբ: Բացի այդ, ցանկալի է, որ հանքարդյունաբերության (ինչպես նաև՝ 1-ին կատեգորիայի գործունեության տեսակների) սահմանել այլ՝ առավել համապակողմանի գնահատումների ընթացակարգ:**

41. Միջազգային պրակտիկայում շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատմանը զուգահեռ և դրա հետ կապված դիտարկվում են մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները: Տվյալ ռազմավարությունում մարդու առողջությունը անտեսվում է: Դրան անդրադարձ կատարվում է հիմնականում աշխատողների առողջության և հանքի փակման համատեքստում: **Առաջարկում ենք ավելացնել միջոցառում՝ մարդու առողջության վրա ազդեցությունների գնահատման մեթոդաբանության մշակում և կիրառում:**

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ՎՆԱՍՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԻ ԱՌԱՆՁԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

42. Չնայած օրենքի պահանջներին, գործնականում չի իրականացվում հանքարդյունաբերական գործունեության ռազմավարական էկոլոգիական գնահատում: ՇՄԱԳ և բնապահպանական փորձաքննություն իրականացվում է

ընդերքի ուսումնասիրման և շահագործման նախագծերի համար: **Առաջարկում ենք ռազմավարության մեջ ֆիքսել տվյալ խնդիրը և, ըստ անհրաժեշտության, նախատեսել դրա լուծման միջոցառումներ: Պետք է ապահովել, որ դեռևս մտադրության փուլում գնահատվի հնարավոր շահագործման ազդեցությունը (ՌԷԳ) և միայն դրա արդյունքում ընդերքը շահագործելու/չշահագործելու վերաբերյալ նախնական որոշման ընդունումը՝ հաշվի առնելով տարածքի այլընտրանքային զարգացման հնարավորությունները և վտանգները, որից հետո նոր պետք է դիտարկվի ներդրման անհրաժեշտությունը և, համապատասխանաբար, նախատեսվեի նախագծի ՇՄԱԳ պրոցեսը իր բոլոր հաշվարկներով և օգուտ-ծախս վերլուծություններով:**

43. Անհրաժեշտ միջոցառումների շարքում նախատեսված է ՇՄԱԳ գործընթացների և այդ շրջանակում ազդակիր համայնքների (բնակավայրերի) ընդգրկման ու հանրային քննարկումների ընթացակարգերի բարելավում և այլն: Հաշվի առնելով, որ հանրային ներգրավման գործընթացների արդյունավետությունը կարող է ապահովվել որոշումների ընդունման գործընթացում նրանց ներգործության հնարավորության ապահովման միջոցով՝ ցանկալի է հստակեցնել խնդիրը: **Այս առումով, առաջարկվում է ընթացակարգերի կատարելագործման գործում կոնկրետացնել հանրության ձայնը ավելի լսելի և ազդեցիկ դարձնելու խնդիրը:**

44. Միջոցառումների չիրականացման հետևանքների շարքում Ռազմավարության նախագիծը նշում է «Բնապահպանական թերի օրենսդրությունը կարող է հանգեցնել այնպիսի նախագծերի հետաձգման/կորստի, ինչպիսին է օրինակ՝ Ամուլսարի նախագիծը, որի վրա ազդել են շրջակա միջավայրի աղտոտվածության վերաբերյալ համայնքի ընկալումները»: Այս օրինակը, ինչպես և եզրահանգումը որևէ հիմք ու հիմնավորում չունի բացի հենց տվյալ հանքավայրը շահագործող ընկերության պնդումներից: **Ավելին, առկա են բավարար հիմքեր (օրինակ՝ Էլարդի զեկույցը) առնվազն կասկածի տակ դնելու տվյալ նախագծի նպատակահարմարությունը:** Ամուլսարը չի շահագործվել 2009թ.-ից ի վեր ընկերության մեղքով, այլ ոչ թե «թերի օրենսդրության»: **Առաջարկում ենք ռազմավարության նախագծից հանել Ամուլսարին առնվող անհիմն և կողմնակալ պնդումը: Հանել այս պարբերությունը:**

45. Ռազմավարական 5-րդ նպատակում որևէ անդրադարձ չկա ռադիացոն ռիսկերի կառավարմանը: Գիտական գրականությունից հայտնի է, որ ուրանը, թորիումը ռադոնը առկա են Հայաստանի ընդերքում և նաև մետաղների ուղեկցող տարրեր են համարվում: Հայաստանում նախկինում ուրանի պաշարների գնահատման իրավունքը «Հայ-ռուսական լեռնահանքային կազմակերպությանն» էր, որը լուծարվել է: Ներկայումս տարբեր ընկերություններ մտադիր են շահագործել հանքեր կամ երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարել հանքային այնպիսի տեղամասերում, որտեղ առկա են վերոնշյալ տարրերը: Թեպետ այդ

ընկերություններն ուրանի կամ թորիումի որոնման կամ արդյունահանման թույլտվություն չունեն, բայց իրենց գործունեության արդյունքում կարող են այդ տարրերի երևակումներին առնչվել՝ բարձրացնելով տեղանքի ռադիացիոն ֆոնը և աղտոտվածությունը: **Առաջարկում ենք հստակ կանոններ սահմանել նման դեպքերից խուսափելու համար:**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 6.

46. Ռազմավարական 6-րդ նպատակում՝ «Անհրաժեշտ գործողությունների համառոտ նկարագիրը» բաժնում (էջ 57) նշված է. «ստեղծել մեխանիզմներ ՀՀ կառավարության և ներկայում գործող հանքարդյունահանող ընկերությունների միջև համագործակցության համար՝ ձևավորելով համատեղ աշխատանքային խումբ և սահմանելով փոփոխությունների իրականացման ժամանակացույց և չափորոշիչներ»: **Առաջարկում ենք վերախմբագրել, քանի որ հստակ չէ, թե ինչ փոփոխությունների մասին է խոսքը:**

47. Հայաստանում հանքարդյունաբերության խնդիրների զգալի մասը պայմանավորված է առկա պրակտիկաներով, հանրային գույքի անպատասխանատու շահագործմամբ, արդյունքում ստացված՝ լքված հանքերով, պոչամբարների բարձիթողի վիճակով: **Հաշվի անելով թափոնների վերամշակման, հանքերի պատշաճ փակման, խախտված տարածքների վերականգնման և ռեկուլտիվացիայի ծայրահեղ կարևորությունը՝ առաջարկում ենք դիտարկել ոչ միայն հանրային ռեսուրսները սպառելու նպատակով արդյունահանման, այլև թվարկված միջոցառումների համար ներդրումային գրավչություն ապահովելու հնարավորությունը:**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 7.

48. Ռազմավարական 7-րդ նպատակում (էջ 59) նշված է. «Տվյալ իրավական նորմով կսահմանվի նախաձեռնողներին և լիցենզավորված անձանց ներկայացվող համապատասխան տեղեկատվություն և պահանջներ հանքարդյունաբերության աշխատանքային պլանի կամ արդյունահանման պլանի գնահատման և հաստատման համար»: **Քանի որ 7-րդ նպատակը պոչամբարային տնտեսությանն է վերաբերում, առաջարկում ենք տվյալ նախադասության մեջ բացի հանքարդյունաբերության աշխատանքային պլանի կամ արդյունահանման պլանի գնահատման մասին նշելը գրել նաև պոչամբարային տնտեսության պահպանման, կառավարման, անվտանգության բարձրացման պլանի մասին, ինչպես նաև սահամանել դրույթ, թե տարեկան որքան պոչանք պետք է լցվի պոչամբար: Բացի այդ, եթե պոչամբարի պարզարանում ջուրը չի օգտագործվում ջրի փակ շրջանառու համակարգով, ապա անհրաժեշտ է պոչամբարային տնտեսությունում ունենալ քիմիական մաքրման**

կայան, որպեսզի պոչամբարի պարզարանից գետ ջուր բաց թողնվի քիմիական մաքրում անցնելուց հետո:

49. Ռազմավարական 7-րդ նպատակում (էջ 59) նշված է. «Տարեկան հաշվետվությունը պետք է ներկայացվի ոլորտի պատասխանատու պատկան մարմին և պետք է ապահովի, որ հանքարդյունաբերական և արդյունահանող ընկերությունների պոչամբարային տնտեսությունները և դրանց մաս կազմող պոչանքի կառավարումը իրականացվի այնպես, որ այն լինի անվտանգ և հնարավորինս նվազեցնի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը»: **Հաշվետվությունը չի կարող ապահովել պոչամբարի անվտանգ շահագործում: Առաջարկում ենք խմբագրել նախադասությունը՝ նշելով. «Տարեկան հաշվետվությունը պետք է ներկայացվի ոլորտի պատասխանատու պատկան մարմին: Հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկատվություն այն մասին, թե հանքարդյունաբերական ընկերությունները ինչ միջոցառումներ են իրականացնում, որպեսզի բարձրանա պոչամբարային տնտեսությունների անվտանգությունը, նվազի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը»:**

50. Ռազմավարական 7-րդ նպատակում (էջ 59) նշված է. «Այդ ուղեցույցը կսահմանի կանոններ ինչպես շահագործման ընթացքի համար, այնպես էլ փակվելուց հետո, օրինակ.

- նախագծում, շինարարություն, շահագործում, մոնիթորինգ և փակում,
- անվտանգություն և կառուցվածքային կայունություն,
- կառուցման, շահագործման և փակման ընթացում վերահսկողության բազմակողմանի իրականացման պարտադիր գործիքակազմի սահմանում,
- կառավարման համակարգեր՝ հանրային անվտանգության, հանրային օգտագործման ենթակառուցվածքների և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար,
- վերականգնողական համակարգեր՝ սոցիալական ազդեցությունը, անբարենպաստ տեսողական պատկերները և շրջակա միջավայրի վրա երկարաժամկետ ռիսկերը նվազագույնի հասցնելու համար»:

Առաջարկում ենք ավելացնել նաև հետևյալ կետը. «պոչամբարների պատվարի հնարավոր փլուզման դեպքում ազդակիր համայնքի պաշտպանության, տարհանման, նոր տարածքների պոչանքներով աղտոտումը կանխելու միջոցառումների իրականացման պարտադիր գործիքակազմի սահմանում»:

51. Միջոցառումների չիրականացման հետևանքներում նշված չէ ոչինչ պոչամբարների հնարավոր վթարների մասին: Տվյալ վտանգը առնվազն առկա է Թեղուտի հանքավայրի դեպքում, առավել ևս, որ Վրաստանի ՀԿ-ների կողմից բազմիցս բարձրաձայնվել է Էսպոի կոնվենցիայի սկզբունքների խախտման հարցը, սակայն Հայաստանը անտեսել է այդ մտահոգությունները: **Առաջարկում ենք շեշտել ռիսկը, որ պոչամբարների անվտանգության ուղղությամբ գործողություններ չձեռնարկելու պարագայում անդրսահմանային ազդեցությունների դեպքում Հայաստանը միլիոնավոր դոլարների վնասներ է փոխհատուցելու հարևան պետություններին:**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 8

52. «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 8. Հողօգտագործման իրավունքի տրամադրման և հողերի ձեռքբերման գործընթացների և գործիքակազմի պարզեցում, ինչպես նաև հողօգտագործման և ընդերքօգտագործման գործընթացների ներդաշնակեցում» **Առաջարկում ենք հանել, քանի որ ՀՀ օրենսդրությամբ շատ պարզ ու հստակ է սահմանված հողերի ձեռքբերման կարգը և որևէ պարզեցման կարիք չկա, հակառակը այն հանքարդյունաբերության համար պետք է նույնիսկ բարդացվի, քանի որ հողն ընդմիշտ կորցնում է իր պիտանելիությունը հանքի փակումից հետո: Ցանկացած պարզեցում բերելու է անձանց /քաղաքացիների, իրավաբանական անձանց և համայնքների/ հողի նկատմամբ սեփականության իրավունքի խախտման, ինչը ՀՀ Սահմանադրության խախտում է:**

53. Ռազմավարության նախագծով անհրաժեշտ գործողությունների շարքում առաջարկվում է պարզեցնել ընդերքօգտագործողների կողմից հողօգտագործման իրավունքներ ստանալու գործընթացը: Հայաստանում հանքարդյունաբերության թույլտվությունների ստացման գործընթացները բավականին խնդրահարույց են և պարունակում են կոռուպցիոն ռիսկեր: Դրան զուգահեռ, հանքարդյունահանողները արտոնյալ խավ են, որոնք տարիներ շարունակ գործել և շահույթ են ստացել բարենպաստ և պատասխանատվությունից զերծ միջավայրում: Հաշվի առնելով օրենսդրության խայտառակ և տարիներով ձգվող բացերը, թույլ ինստիտուցիոնալ կարողությունները և իրականացվող աշխատանքների (օրինակ՝ ԾՄԱԳ-ի) առանց այն էլ անբավարար որակը՝ թույլտվությունների ստացման գործընթացների պարզեցմանն ուղղված քայլերի նպատակահարմարությանն անդրադառնալ կարելի է միայն տարիներ անց՝ մնացած բոլոր խնդիրները շտկելուց և պատշաճ կիրարկելուց հետո: Ռազմավարության ներկայիս փուլում պետք է ուշադրության կենտրոն բերել պետության և իր քաղաքացիների շահերը և միայն հետագայում, ըստ անհրաժեշտության, անդրադառնալ այս թեմային: **Առաջարկում են ամբողջությամբ վերանայել հանքարդյունաբերության թույլտվությունների և այլ գործընթացների թեթևացմանը միտված առաջարկությունները/ միջոցառումները:**

54. Ռազմավարության նախագծով այս նպատակի համար առաջարկվող միջոցառումների չիրականացման հետևանքների շարքում արված է եզրահանգում, որ «նման կարգավորումների համատեքստում ընդերքօգտագործողները կունենան ընդերքօգտագործման իրավունք, սակայն չեն կարողանա իրացնել այն, քանի որ չունեն հողօգտագործման իրավունք»: Նման հոռետեսական եզրահանգումը անհիմն է: Հանքարդյունաբերողները կարող են ստանալ իրավունք մի քիչ ավելի երկար գործընթացներով, ինչը թերևս արդարացված կարելի է համար հանրային ռեսուրսները շահագործելու վստահությունը ստանձնելու և տարիներ շարունակ հսկայական շահույթ ստանալու դիմաց:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 9.

55. Հանքավայրերում աշխատողների առողջության պահպանության և անվտանգության ապահովման համար նախատեսված միջոցառումները բավարար չեն: **Առաջարկվում է ներդնել միջազգային չափանիշներին համապատասխանող հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքի վտանգների ռիսկերի գնահատման, նվազեցման և վնասակարության կանխարգելման գործիքակազմեր, ընդերքօգտագործման ծրագրին համապատասխան գնահատել տեխնիկական զինվածությունը և աշխատուժի պատրաստվածության աստիճանը, բյուջետային հատկացումներ իրականացնել անհրաժեշտ տեխնիկական պատրաստվածության համար և ինստիտուցիոնալ քայլեր ձեռնարկել՝ մեծացնելով նաև հասարակական ազդեցության գործոնը՝ որպես իրավագիտակից հասարակություն ձևավորելու հետևանք, ներդնել հանքարդյունաբերական ընկերությունների կողմից աշխատակիցների, ինչպես նաև աշխատանքների հետ անմիջականորեն չկապված, սակայն հանքարդյունաբերական աշխատանքների արդյունքում քաղաքացիների կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասներից պարտադիր ապահովագրության համակարգ:**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 10.

56. Ռազմավարական 10-րդ նպատակին հասնելու անհրաժեշտ գործողությունների շարքում նախատեսված է սահմանել վերահսկողական արդյունավետ մեխանիզմ, որը ենթադրում է մասնավոր սեկտորի և պետական մարմնի գործուն համագործակցություն: **Հանրային վստահությունը հանքարդյունաբերողների և պետության նկատմամբ ամրապնդելու նպատակով առաջարկում ենք վերահսկողության գործառույթում նախատեսել մեխանիզմ նաև հանրային մասնակցության համար:**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 11.

57. Ռազմավարական 11-րդ նպատակի առկա խնդիրների հատվածի վերջին պարբերությունում նշված են մի շարք մտքեր ներդրումային միջավայրը առավել կայուն, կանխատեսելի և գրավիչ դարձնելու առնչությամբ: Անշուշտ, ներդրումային գրավիչ միջավայրի առաջնահերթ շահառուն մասնավոր հատվածն է, այդուհանդերձ ցանկալի կլիներ այս հարցերի շուրջ նաև լիներ և մեջբերվեր ներդրումների ենթադրյալ վերջնական շահառու հանդիսացող Հայաստանի քաղաքացիների կարծիքները: Ի վերջո, բիզնեսի համար բարենպաստ միջավայր ապահովելու նպատակը երկրի տնտեսական զարգացումն է, ենթադրաբար, ի շահ քաղաքացիների և նրանց բարօրության: **Առաջարկում ենք ձևավորել մեխանիզմ քաղաքացիների կարծիքը բիզնես միջավայրի և հանքարդյունաբերության վերաբերյալ պարզելու նպատակով:**

58. Անհրաժեշտ գործողությունների համառոտ նկարագրում առաջարկվում է կայունացնել իրավական համակարգը և խուսափել օրենսդրության իրավիճակային և հաճախակի կատարվող ժամանակավոր շտկումներից և փոփոխություններից: Տվյալ մոտեցումը միանշանակ բխում է բոլորի շահերից: **Այդ իսկ պատճառով առաջարկում ենք ռազմավարության (ինչպես նաև միջոցառումների պլանի) մեջ ամրագրել առաջնահերթությունը. սկզբում կարգի բերել օրենսդրությունը, համապատասխան ընթացակարգերը և ինստիտուտները՝ լուծում տալով հանքարդյունաբերության հետևանքով առաջացող բազում խնդիրներին, այնուհետ՝ մտածել ներդրումային միջավայրի բարելավման և ներդրողներ հրավիրելու մասին:**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 12.

59. Ռազմավարական 12-րդ նպատակում՝ «Առկա խնդիրը» բաժնում (էջ 72) նշված է, որ «Ներկայում ընկերությունները համայնքների հետ պատշաճ մակարդակով չեն քննարկում սոցիալ-տնտեսական զարգացման առնչությամբ համայնքների ակնկալիքները, ինչպես նաև տեղական համայնքների հետ չեն հաստատում համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների, տեսլականի շուրջ պայմանագրային դրույթները՝ սոցիալական ծրագրեր իրականացնելու համար, բայց հաճախ հանդիպում են համայնքների ղեկավարների հետ և տրամադրում են ֆինանսական կամ նյութական աջակցություն՝ հիմնվելով միայն բաժնետերերի բարի կամքի և որոշման վրա»: **Առաջարկում ենք ավելացնել նաև, որ ընկերությունները լուծում են մասնավոր հարցեր՝ մուծումներ կատարելով իշխանության հիմնական դերակատարներին փոխկապակցված հիմնադրամներին և լուծելով մասնավոր հարցեր, այդ թվում՝ օրենքներ փոխելու միջոցով: Տվյալ մոտեցումը նաև պարունակում է կոռուպցիոն ռիսկեր (տես՝ https://transparency.am/hy/publication/pdf/114/1177):**

60. Ռազմավարական 12-րդ նպատակում՝ «Առկա խնդիրը» բաժնում (էջ 72) նշված է. «Հայաստանում հանքարդյունաբերության նկատմամբ հանրության դրական մոտեցման բացակայությունը մասամբ արմատավորված է բնապահպանական և տնտեսական խնդիրներում, սակայն դրանում կա նաև մշակութային կարևոր բաղադրիչ: Սա խոչընդոտում է հանրության բովանդակալից մասնակցությանը և, ինչն է՛լ ավելի կարևոր է, հավաստի և փաստացի տեղեկատվության հիման վրա որոշումների կայացմանը: Սա, բնականաբար, հանգեցնում է համայնքների և ներդրողների միջև անտագոնիզմի մթնոլորտի ձևավորմանը, և հանքարդյունաբերության ցանկացած նախաձեռնություն ընկալվում է որպես ի սկզբանե սխալ, վնասակար և տվյալ համայնքի շահերին հակասող: Ներկայում ընկերությունները համայնքների հետ պատշաճ մակարդակով չեն քննարկում սոցիալ-տնտեսական զարգացման առնչությամբ համայնքների ակնկալիքները, ինչպես նաև տեղական համայնքների հետ չեն հաստատում համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների, տեսլականի շուրջ պայմանագրային դրույթները՝ սոցիալական ծրագրեր իրականացնելու համար...»: **Հանրային բացասական ընկալումը պայմանավորված է նաև նրանով, որ հանքարդյունաբերական ծրագրի վերաբերյալ հանրային քննարկումների ժամանակ, հատկապես լսումների 1-ին փուլում, քննարկումները ձեռնարկողի կողմից հանրության համար թաքցվում են ծրագրի իրական ռիսկերը և չեն նշվում դրանց կառավարմանն ուղղված միջոցառումները: Առաջնահերթ դա պետք է գրվի, նոր նշվի սոցիալ-տնտեսական աջակցության մասին: Այլապես տպավորությունը է, որ ընդերքօգտագործողը սոցիալ-տնտեսական աջակցության խոստումներ եթե տա, համայնքը դրական կվերաբերվի հանքարդյունաբերական ծրագրին և կտա համաձայնությունը: Ըստ էության, ազդակիր համայնքի բնակչություն-բիզնես երկխոսության մեջ բացակայում է անկեղծությունը: Բացի այդ, հանրային լսումները հաճախ անցնում են ճնշումներով: Սրանք խնդիրներ են, որոնց ռազմավարությունը պետք է անդրադառնա և լուծումներ առաջարկի:**

61. Ռազմավարական 12-րդ նպատակում՝ «Անհրաժեշտ գործողությունների համառոտ նկարագիրը» (էջ 73) բաժինը բացառապես վերաբերում է ընդերքօգտագործող-համայնք համագործակցությանը: **Այստեղ անհրաժեշտ է ավելացնել կետեր հանրային լսումների փուլում համայնքի բնակչությանը նախատեսվող ծրագրի իրական բնապահպանական, սոցիալական, տնտեսական ռիսկերի, դրանց կառավարման, վնասի պատճառման դեպքում համայնքին/բնակչին փոխհատուցման, ապահովագրության մասին ընդերքօգտագործողի կողմից տեղեկատվության տրամադրման մասին:**

62. Ռազմավարական 12-րդ նպատակում՝ «Անհրաժեշտ գործողությունների համառոտ նկարագիրը» բաժնում առաջարկվում է ապահովել, որ «...համայնքներին հասանելի լինեն այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են ընդերքօգտագործողների

հետ համայնքի ներգրավվածության պլանի կամ պայմանագրի շուրջ բանակցելու համար», «...որ համաձայնեցված համայնքի ներգրավման պլանը կամ պայմանագիրը փաստաթղթավորվի, հասանելի լինի բոլորին՝ մոնիթորինգի, առաջընթացի համար» և այլն: **Անհրաժեշտ է ի լրումն վերոնշյալի ամրագրել միջոցառում՝ ապահովելու, որպեսզի շահագրգիռ հանրությունը, այդ թվում՝ ազդակիր բնակիչները, ներգրավվեն որոշումների ընդունման ամենավաղ փուլերում, երբ դեռ ընդամենը գաղափարը/հայեցակարգն է քննարկվում: Պարտադիր է ապահովել սկզբունք և մեխանիզմ, որպեսզի հանրության ձայնը լսելի լինի և պարտադիր հաշվի առնվի որոշում ընդունողների կողմից: Ընդ որում, պետք է երաշխավորել, որ խոշորացված համայնքներում առաջնահերթություն և առավել կարևորություն տրվի հենց ազդակիր բնակավայրի բնակիչների կարծիքին: Պետք է ամրագրել պահանջ ընկերությունների սոցիալ-բնապահպանական պարտավորությունների սահմանմանը և դրանց իրականացման, ինչպես նաև հանքերի շահագործման ընթացքի մոնիտորինգին ազդակիր համայնքի/բնակավայրի բնակիչների ներգրավման մեխանիզմներ ապահովելու համար: Անհրաժեշտ է, որպեսզի հաշվի առնվի համայնքի տեղական քաղաքականությունը: Այսինքն, եթե համայնքը, որոշել է իր զարգացման ուղին, որն արտացոլված է համայնքի հնգամյա զարգացման ծրագրերում կամ այլ տեղական քաղաքականություններում, դա հաշվի առնվի: Եթե համայնքը որոշել է ընդհանուր համայնքի, կամ կոնկրետ բնակավայրի զարգացման ուղղվածությունը կանաչ տնտեսության զարգացման ուղղությամբ, ապա պաշտպանված լինի իր այդ իրավունքը և զերծ լինի իր համայքնում հանքարդյունաբերական գործունեություն իրականացնելու փորձերի նախաձեռնումից:**

63. Ռազմավարական 12-րդ նպատակում «Անհրաժեշտ գործողությունների համառոտ նկարագիրը» բաժնում հարկավոր է ամրագրել կոռուպցիայի կանխարգելման դրույթներ: **Մասնավորապես՝ հարկավոր է ավելացնել սկզբունք և պահանջ, որպեսզի բացառվի ընդերքօգտագործողների կողմից տրվող բարեգործական կամ այլ կարգի ծախսերը պետական, համայնքային կամ համապատասխան պաշտոնյաների հետ փոխկապակցված հիմնադրամներին և ՏԻՄ-երին՝ մինչև օրենքով սահմանված թույլտվությունների ստացումը:**

64. Ռազմավարական 12-րդ նպատակում «Միջոցառումների իրականացման արդյունքները» բաժնում (էջ 73) նշված է. «Հանքարդյունաբերության ոլորտը Հայաստանի բնակչության համար ապահովում է զբաղվածություն և ապրուստի միջոցներ, հատկապես այն տարածքներում, որտեղ տնտեսական այլ հնարավորությունները սահմանափակ են: Օրինակ, Թեղուտի հանքավայրը Լոռիում զբաղվածության հիմնական աղբյուրն է: Հետևաբար, որպեսզի բոլոր

ազդակիր համայնքները օգուտ քաղեն հանքարդյունաբերական գործունեությունից, կարևոր է, որ հանքարդյունահանող ընկերությունների և տեղական համայնքների միջև համայնքների զարգացման համաձայնագիրը/պլանը պատշաճ կերպով բանակցվի և մշտադիտարկվի պետության կողմից»: **Առաջարկում ենք այս բաժնում անդրադառնալ 60-րդ կետում առաջարկված դրույթներին, որոնց կատարման արդյունքում պետք է նշել. «Հանրային լսումների փուլում համայնքի բնակչությանը նախատեսվող ծրագրի իրական բնապահպանական, սոցիալական, տնտեսական, առողջապահական ռիսկերի, դրանց կառավարման, վնասի պատճառման դեպքում համայնքին/բնակչին փոխհատուցման, ապահովագրության մասին ընդերքօգտագործողի կողմից ստացել է պատշաճ տեղեկատվություն և որոշում կայացրել ի օգուտ/ ի վնաս հանքարդյունաբերական ծրագրի»:**

Առաջարկում ենք Թեղուտի հանքավայրի օրինակը հանել, քանի որ մի ամբողջ համայնք կախվածության մեջ է ընկել մի ընկերությունից և չի կարողանում տնտեսության այլ ճյուղեր զարգացնել: Իսկ երբ Թեղուտի հանքի աշխատանքները դադարեցվում են, դա պարզապես սոցիալական աղետ է տեղի բնակչության համար, քանի որ բնակիչները չեն կարողանում ապահովել ինչպես ընտանիքի ապրուստը, այնպես էլ իրենց վարկային պարտավորությունները:

Ռազմավարությունն այս խնդրին էլ պետք է անդրադառնա և լուծումներ առաջարկի:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 13.

65. Հանքարդյունաբերության անվտանգ լինելու վերաբերյալ հանրային ընկալումներում փոփոխություն մտցնելու նպատակով կարևոր է տեղեկացվածությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության միջոցառումների մասին: **Առաջարկում ենք հանքարդյունաբերական տարածքներում նախատեսել պետության կողմից շրջակա միջավայրի մոնիտորինգային հզորությունների ավելացում և մոնիտորինգային արդյունքների կենդանի ռեժիմով առցանց հրապարակում:**

66. Ընդերքօգտագործողների գործունության նկատմամբ վստահությունը և անտագոնիզմը պայմանավորված է նաև նրանց կողմից հանրային գույքը օգտագործելու ոչ թափանցիկ գործելակերպով: **Առաջարկում ենք Ռազմավարական 13-րդ նպատակի «Առկա խնդիրը» հատվածում ֆիքսել տվյալ խնդիրը և համապատասխանաբար ավելացնել միջոցառումներ՝ նախատեսելու թափանցիկության լրացուցիչ մեխանիզմներ, օրինակ՝ ընկերությունների կայքերի առկայություն, պարտադիր և պարբերաբար հրապարակման ենթակա տվյալներ,**

ընկերությունների ղեկավար օղակներին փոխկապակցված հիմնադրամների գործունեության թափանցիկություն և այլն:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 15.

67. Ռազմավարական 15-րդ նպատակում՝ «Առկա խնդիր» բաժնում (էջ 80) նշված է. «Պետական համակարգի կարողությունների զարգացումը ենթադրում է մասնագետների վերապատրաստում՝ հետևյալ հնարավորությունների ապահովմամբ.

- Երկրաբանական և հանքաբանական ուղղություններ,
- ընդերքաբանական, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննությունների,
- պետական վերահսկողության,
- նոր տեխնոլոգիաների ներդրման, լաբորատոր և տեխնիկական այլ սարքավորումների հագեցվածության ապահովման»:

Առաջարկում ենք ավելացնել շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման/վերլուծության կարողությունները և համապատասխան տեխնիկական հզորությունները: Նաև առաջարկում ենք ավելացնել մասնագետների իրավաբանական վերապատրաստման մասին դրույթ, քանի որ վերջին ժամանակահատվածում տեղի ունեցած դատավարությունների արդյունքները ցույց են տալիս, որ վարչական դատարանում պետական մարմինների իրավապաշտպանները չեն կարողանում պաշտպանել պետական մարմինների ընդունած որոշումները: Մասնավոր ընկերությունները հաղթում են դատերը: Բացի այդ, անհրաժեշտ են ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որպեսզի նախարարությունները՝ մասնավորապես ՏԿԵՆ-ը, որը տարբեր ոլորտների կառավարումն է համակարգում, ունենա յուրաքանչյուր ոլորտի համար առանձին իրավաբաններ, որպեսզի նրանք կենտրոնան մի ոլորտի վրա: Այդպիսով կբարձրանա նրանց աշխատանքի արդյունավետությունը:

68. Ընդհանուր առմամբ, առանցքային նշանակություն ունի առաջնահերթությունների սահմանումը: **Կարծում ենք, որ պետությունը նախնական փուլում պետք է կարգի բերի ողջ օրենսդրական դաշտը, ապահովի ամբողջական պատկեր հանքարդյունաբերության զարգացման հետևանքների գնահատումը, ապահովի գնահատումների և վերահսկողության ինստիտուցիոնալ կարողությունները, ազդակիր համայնքների և շահագրգիռ հանրության հետ համերաշխությունը և նոր միայն նախաձեռնի/ծավալի նոր հանքարդյունաբերական գործունեություն:**

ԱՃԹՆ ԲՇԽ քաղաքացիական հասարակության խմբակցության առաջարկություններն ու դիտարկումները

«Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության գործողությունների պլան»-ի 4-րդ նախագծային տարբերակի վերաբերյալ

1. **Ռազմավարական նպատակ 1. Երկրաբանական տեղեկատվության թվայնացում. որակի, պահպանման ու ներկայացման բարելավում**

   Խնդիր՝ ընդերքի վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային համակարգի լիարժեքության, տեղեկատվության հասանելիության և մատչելիության ապահովում

   Պաշարների շարժի վերաբերյալ էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման համակարգի ստեղծում միջոցառման մեջ նախատեսել նաև տարբեր տարիների հաշվառված պաշարների փոփոխության տվյալները և համապատասխան հիմքերը:

   Ընդերքօգտագործման ոլորտում մեկ ներքին միասնական հարթակի ստեղծումը միջոցառման մեջ հստակեցնել, որ այն ապահովելու է որոնման հնարավորություն:

   Ավելացնել գործողություն/մեխանիզմ՝ ապահովելու, որ մասնավորի կողմից իրականացվող երկրաբանական աշխատանքների արդյունքները ևս հաշվառվեն և արտացոլվեն միասնական հարթակում:

2. **Ռազմավարական նպատակ 2. Երկրաբանական ծառայությունների արդիականացում և երկրաբանական ծառայության ստեղծում**

   Խնդիր՝ ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում միասնական ծառայության ստեղծում

   Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ սահմանամերձ գոտիներում միջոցառումը հանել, քանի որ այն հիմնավորված չէ և հաշվի չի առնում երկարաժամկետ անվտանգային ռիսկերը:

   Առհասարակ ուսումնասիրությունների մասով պետք է սահմանել սկզբունք և բացառել առանձին տեղանքներում (օրինակ՝ անտառներ, հատուկ պահպանվող տարածքներ, հնագիտական տարածքներ, պատմամշակութային միջավայր, կենդանիների միգրացիոն գոտիներ, քաղաքներ) նույնիսկ ուսումնասիրություն իրականացնելը: Դրան կարող են անդրադառնալ հաջորդ սերունդները, երբ տնկած կլինեն բազմաթիվ անտառներ, կլինեն անվտանգ շահագործման մեթոդներ և այլն:

3. **Ռազմավարական նպատակ 5. Շրջակա միջավայրի կառավարում**

Խնդիր՝ Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության նպատակով հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության և իրավական, նորմատիվային ու ինստիտուցիոնալ շրջանակի գնահատում

Առաջնահերթ իրականացման պայմանով ավելացնել միջոցառում՝ ապահովելու առկա հանքավայրերի սոցիալ-էկոլոգիական ազդեցության գնահատումը՝ հիմք ընդունելով միջազգային մեթոդները, պատկերացնելու մեր իրավիճակը, հետո նոր ընդունելու հետագա որոշումներ:

Հանքարդյունահանման տարբեր փուլերում բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատման օրենսդրական պահանջի և ռիսկերի գնահատման ուղեցույցները մշակելու և (կամ) ՀՀ համար տեղայնացնելու ու ներդաշնակեցնելու կետում ամրագրել, որ դրանք պետք է ներառեն հողի, օդի, ջրի, կենսաբազմազանության, մարդու առողջության, տարածքի այլընտրանքային զարգացման (գյուղատնտեսություն, առողջապահական տուրիզմ, հնագիտական տուրիզմ), կորսված հնարավորությունների և գումարային/կուտակային վնասները հաշարկելու մեթոդները:

Առաջարկում ենք նախատեսել ընդերքօգտագործման դեպքում շրջակա միջավայրի բաղադրիչներին՝ օդին, հողին, ջրին, կենսաբազմազանությանը պատճառվող տնտեսական վնասի իրատեսական գնահատման և ընդերքօգտագործողի կողմից ազդակիր համայնքին/պետությանը այդ գումարի վճարման պահանջ՝ նախատեսելով համապատասխան միջոցառումներ, ժամանակացույց, ինչպես նաև նշելով օգուտներն ու ազդեցությունը:

4. **Ռազմավարական նպատակ 5. Շրջակա միջավայրի կառավարում**

Խնդիր՝ Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության նպատակով հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության և իրավական, նորմատիվային ու ինստիտուցիոնալ շրջանակի գնահատում

Խնդիր 5-ում նշված է. «Մշակել ընթացակարգ՝ ՇՄԱԳ դրական եզրակացություն և ընդերքօգտագործման թույլտվություն ստանալուց հետո շրջակա միջավայրին առնչվող մնացած այլ թույլտվությունների (ջրօգտագործման և ջրհեռացման, մթնոլորտային օդ արտանետումների) փաթեթային կարգով ստացման համար (մանրամասն տե՛ս նաև միջոցառում 11.2)»:

Հանքարդյունաբերական ընկերություններին ՋԹ տրամադրելիս՝ լիազոր մարմինը պետք է հաշվի առնի ՀՀ ջրային օրենսգրքով ջրային ռեսուրսների օգտագործման առաջնահերթությունները: Պարզեցված ընթացակարգով ՋԹ-ի տրամադրումը կարող է առաջացնել ջրային

օրենսգրքի պահանջի խախտում և այլ տնտեսվարողների շահերի ոտնահարում: Բացի այդ, նման կարգի սահմանման դեպքում պետությունը ստորադասելու է տնտեսության այլ ճյուղերի շահը հանքարդյունաբերական բիզնեսի շահին, քանի որ առաջարկվող կարգը չի տարածվում տնտեսական ճյուղերի բիզնեսի վրա, ինչը կառաջացնի շահերի բախում: Առաջարկվող լուծումն անկատար է, հանգեցնելու է նոր խնդիրների: Առաջարկում ենք հանել:

Խնդիր 6-ում նշված է. «Մշակել մշտադիտարկումների կարգ՝ համաձայն ՄՖԿ ուղեցույցի և Բրիտանական Կոլումբիայի իշխանությունների (Կանադա) կողմից մշակված «Ջրի և օդի ելակետային մշտադիտարկման ուղեցույց հանքարդյունաբերության համար» ուղեցույց փաստաթղթի պահանջների»: **Առաջարկում ենք, որպեսզի մշտադիտարկումների կարգը ներառի շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների մշտադիտարկում: Բաց այդ, մշատադիտարկումների արդյունքում հայտնաբերված շեղումների, աղտոտվածության, արտանետումների աճի և այլ խախտումների համար անհրաժեշտ է նախատեսել դրանց վերացման, փոխհատուցման, տուգանման, պատասխանատվության ենթարկման միջոցառումներ:**

Տվյալ բաժնում նախատեսվող բոլոր ուղեցույցերի և կարգերի համար առաջարկում ենք, որպեսզի դրանք հաստատվեն ՀՀ կառավարուության որոշումներով և դրանցում ներկայացված կետերի կատարումը պարտադիր լինի ընդերքօգտագործողների կողմից:

Առհասարակ անտեսված է մարդու առողջության հետ կապված հարցերը: Դրանց անդրադարձ կա միայն աշխատանքի անվտանգության և հանքերի փակման համատեքստում: Ներկայացված են մի շարք ցուցանիշներ, թե ինչքանով են նվազեցվելու մարդու առողջության հետ կապված հարցերը/միջոցառումները ամբողջությամբ անտեսված են: Առաջարկում ենք ավելացնել միջոցառումներ՝ զարգացնելու մարդու առողջության վրա ազդեցությունների գնահատման և պետության կողմից ընթացիկ վերահսկողության իրավական/ ինստիտուցիոնալ հիմքերը:

5. **Ռազմավարական նպատակ 5. Շրջակա միջավայրի կառավարում**

Խնդիր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գործընթացի, հանրային քննարկումների ընթացակարգերի բարելավման անհրաժեշտություն

Առաջարկում ենք ավելացնել կետ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության մասին, որը կնախատեսի հետևյալը. որպես շրջակա միջավայրի և մարդու առողջության համար վտանգավոր տնտեսական գործունեության տեսակ՝

հանքարդյունաբերական ծրագրերի համար իրականացնել համալիր փորձաքննություն, այդ թվում բնապահպանական, սոցիալ-տնտեսական, առողջապահական, տեխիկական անվտանգության: Փորձաքննությունը պետք է իրականացվի ոչ միայն փաստաթղթերով, այլև դաշտային աշխատանքներով: Փորձաքննությունը պետք անցկացնեն ոչ միայն հայ պրոֆեսիոնալ մասնագետները ամեն մեկն իր որորտի մասով, այլև անհրաժեշտության դեպքում միջազգային փորձագետները:

Առաջարկում ենք ավելացնել միջոցառում՝ հանքարդյունաբերության ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) և ՇՄԱԳ ընթացակարգերի և համապատասխան պետական փորձաքննության մեթոդների կատարելագործում:

1-ին կետում նշված է. «Մշակել հանքարդյունաբերությունից ստացված օգուտների և վնասների հարաբերակցության՝ ծախս-օգուտ հաշվարկի վերլուծության մեթոդաբանություն՝ վնասի գնահատման միասնական մեթոդաբանության համատեքստում»: **Առաջարկում ենք բացի վնասի գնահատումից նաև նախատեսել վնասի փոխհատուցում ընդերքօգտագործողի կողմից:**

2-րդ կետում նշված է. «Մշակել կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատման մեթոդաբանություն/ուղեցույց»: Ա**ռաջարկում ենք բացի գնահատումից նախատեսել փոխհատուցման մեխանիզմներ:**

3-րդ կետով առաջարկվում է մշակել ՇՄԱԳ գործընթացում համայնքների ընդգրկման վերաբերյալ ուղեցույց, որի արդյունքում ակնկալվում է համայնքների իրական ներգրավվածության 90% ապահովում: **Առաջարկում ենք ցուցանիշների մեջ ավելացնել, թե համայքների կողմից ներկայացված առաջարկությունների քանի տոկոսն է հիմք ընդունվել և ազդեցություն ունեցել համապատասխան որոշումներում, քանի բնակիչ կամ քանի համայնքի ավագանի է կողմ և դեմ եղել հանքավայրի շահագործմանը:**

5-րդ կետով նախատեսվում է մշակել ուղեցույց ՇՄԱԳ գործընթացում շրջակա միջավայրի բաղադրիչների (հող, օդ, ջուր, կենսաբազմազանություն և այլն) ելակետային տվյալների հավաքման և վերլուծման համար: **Առաջարկում ենք ավելացնել էկոհամակարգային ծառայությունների, այլընտրանքային զարգացման սցենարների և կորսված հնարավորությունների հաշվարկի, մարդու առողջության վրա ազդեցության մեթոդներ/ուղեցույց:**

6. **Ռազմավարական նպատակ 6. Շրջակա միջավայրի պահպանության և երկարաժամկետ հողօգտագործման համատեքստում հանքերի պատշաճ փակման և այլ խախտված տարածքների, ներառյալ՝**

ընդերքօգտագործման թափոնների պատշաճ վերականգնման և ռեկուլտիվացիայի ապահովում

Խնդիր՝ Երկարաժամկետ նախագծերի դեպքում ռեկուլտիվացիոն աշխատանքների ողջ ծավալը վերջում թողնելու և ռիսկերի կառավարման խնդիրներից խուսափելու նպատակով արդեն չշահագործվող հատվածների համար ընթացիկ ռեկուլտիվացիոն աշխատանքների և դրանց իրականացման պլան-ժամանակացույցի վերանայման պահանջի, այդ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերահաշվարկների իրականացման ժամկետների և մեթոդների սահմանման անհրաժեշտություն

2-րդ կետով առաջարկվում է իրականացնել փակված/չգործող հանքերի և լքված/տիրազուրկ ընդերքօգտագործման թափոնների բնապահպանական ազդեցությունների գնահատում և առավել խնդրահարույց կետերի (hot-spot-ների) հստակեցում և այլն: **Տվյալ միջոցառման իրականացման համար նախանշված 2025 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ վերջնաժամկետը չափազանց երկարաձգված է առկա խնդիրների և հասցվող վնասների համատեքստում: Առաջարկվում է նախատեսել այս միջոցառումը առաջնահերթության կարգով:**

6-րդ կետով առաջարկվում է ստեղծել հնարավորություն ժառանգություն մնացած (լքված) հանքերի և ընդերքօգտագործման թափոնների համաֆինանսավորմամբ (պետություն-մասնավոր ընկերություն) մաքրելու և (կամ) վերամշակելու համար: **Տվյալ միջոցառման ժամկետը՝ 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ ևս անհիմն ձգձգված է և համարժեք չի խնդրի կարևորությանը: Բացի այդ առաջարկվում է նշված միջոցառումների համար ապահովել ներդրումային գրավչություն:**

7. **Ռազմավարական նպատակ 8. Հողօգտագործման իրավունքի տրամադրման և հողերի ձեռքբերման գործընթացների և գործիքակազմի պարզեցում, ինչպես նաև հողօգտագործման և ընդերքօգտագործման գործընթացների ներդաշնակեցում**

Խնդիր 1. Հանրային և մասնավոր շահի հավասարակշռումը ընդերքօգտագործման համար հողային իրավունքների շրջանակում

Առաջարկում ենք ամբողջությամբ վերանայել հանքարդյունաբերողների համար պարզեցված ընթացակարգերի բոլոր մոտեցումներն ու միջոցառումները: Նախ, չի կարելի դրանց անդրադառնալ քանի դեռ կարգի չի բերվել ամբողջ օրենսդրական/ինստիտուցիոնալ/ՌԷԳ/ՇՄԱԳ դաշտը: Մյուս կողմից, կարծում ենք, որ հանքարդյունաբերողները չպետք է լինեն արտոնյալ խավ, իսկ տվյալ բարդ գործընթացի համար թույլտվությունների ստացման սահմանված ընթացակարգերը պետք է առնվազն

արդարացված համարվեն հանրային ռեսուրսները շահագործելու վստահությունը ստանձնելու և տարիներ շարունակ հսկայական շահույթ ստանալու դիմաց:

8. **Ռազմավարական նպատակ 9. Աշխատողների առողջության պահպանության և անվտանգության ապահովում**

   Խնդիր՝ Հանքավայրերում աշխատողների և շրջակա համայնքերի համար անվտանգության նվազագույն չափանիշների առկայության անհրաժեշտություն (ցանկապատում, արտակարգ իրավիճակների պլանի առկայություն, ազդանշանային համակարգեր, բեռնատար մեքենաների կահավորանք, աշխատողների համար անվտանգության անձնական պարագաներ/հագուստ, ներքին անվտանգության կանոնակարգեր և այլն)

   Սույն խնդրի ներքո առաջարկվում է միջոցառում. «Ներդնել միջազգային չափանիշներին համապատասխանող հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքի վտանգների ռիսկերի գնահատման, նվազեցման և վնասակարության կանխարգելման գործիքակազմեր»:

9. **Ռազմավարական նպատակ 9. Աշխատողների առողջության պահպանության և անվտանգության ապահովում**

   Խնդիր՝ Հանքարդյունաբերության օբյեկտների նախագծման, կառուցման, պահպանման և փակման պահանջների ու չափանիշների սահմանում, ինչպես նաև կարողությունների էական սահմանափակումների և մարտահրավերների գնահատում հանքարդյունաբերական ենթակառուցվածքների տեխնիկական անվտանգության համատեքստում

   Ներառել հետևյալ գործողությունը. «Ընդերքօգտագործման ծրագրին համապատասխան գնահատել տեխնիկական զինվածությունը և աշխատուժի պատրաստվածության աստիճանը, բյուջետային հատկացումներ իրականացնել անհրաժեշտ տեխնիկական պատրաստվածության համար և ինստիտուցիոնալ քայլեր ձեռնարկել՝ մեծացնելով նաև հասարակական ազդեցության գործոնը՝ որպես իրավագիտակից հասարակություն ձևավորելու հետևանք»:

10. **Ռազմավարական նպատակ 9. Աշխատողների առողջության պահպանության և անվտանգության ապահովում**

    Խնդիր՝ Հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքային իրավունքներին առնչվող գնահատման, մոնիթորինգի և կիրառման մեխանիզմների վերանայման, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների, հանգստի իրավունքի ապահովման վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացման անհրաժեշտություն

Տվյալ խնդրի շրջանակում ավելացնել հետևյալ գործողությունը «Ներդնել հանքարդյունահանող ընկերությունների կողմից աշխատակիցների, ինչպես նաև աշխատանքների հետ անմիջականորեն չկապված, սակայն հանքարդյունաբերական աշխատանքների արդյունքում քաղաքացիների կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասներից պարտադիր ապահովագրության համակարգ»:

11. **Ռազմավարական նպատակ 10. Պետական եկամուտների ապահովում՝ պատշաճ և հավասարակշռված ֆիսկալ համակարգի միջոցով**

Խնդիր՝ Խտանյութում և այլ արտադրանքում վերջնական պարունակության ճշգրիտ որոշման խնդիրարդյունաբերության ոլորտում աշխատանքային իրավունքներին առնչվող գնահատման, մոնիթորինգի և կիրառման մեխանիզմների վերանայման, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների, հանգստի իրավունք

1-ին կետով առաջարկվող նմուշարկման գործընթացի խստացման նպատակով նախատեսել պետական վերահսկողության գործիքակազմում նախատեսել շահագրգիռ հանրության ներկայացուցիչների մասնակցության մեխանիզմներ:

2-րդ կետով առաջարկված է վերանայել հաշվետվողականության պարբերականությունը, որի ստուգման համար նշված է առավել արժանահավատ արդյունքներ և վստահության մթնոլորտի ձևավորում: Անհասկանալի է, թե ինչպես է չափվելու նման արդյունքը: Նման կերպ, 6-րդ կետով առաջարկվում է հստակ սահմանել ճշգրտության և թափանցիկության պահանջները: Դրա արդյունքում ակնկալվում է որ լինեն առավել արժանահավատ արդյունքներ և վստահության մթնոլորտի ձևավորում: Կրկին անհասկանալի է ինչպես է դա նախատեսվում չափել: Ռազմավարությունը ոչինչ չի ասում քաղաքացիների ընկալումների, վստահության գնահատումների մասին: Առհասարակ միջոցառումների արդյունքների չափման մեթոդները ցանկալի է հնարավորինս հստակեցնել:

12. **Ռազմավարական նպատակ 11.** Կայուն, կանխատեսելի և գրավիչ ներդրումային միջավայրի ձևավորում

Խնդիր՝ Ներդրումային գրավիչ միջավայրի ձևավորում հարակից իրավունքների տրամադրման գործընթացի պարզեցման և միմյանց միջև կապերի ստեղծման միջոցով (հողօգտագործման, ջրօգտագործման, արտանետումների իրավունք և այլն)

Առաջարկվում է գործընթացների թեթևացման և գրավիչ միջավայրի խթանմանը միտված բոլոր միջոցառումների նպատակահարմարությունը վերանայել և ժամկետները հետաձգել՝ միջոցառումները գործողությունները պայմանավորելով հանքարդյունաբերության բացասական ազդեցությունների հետ կապված բոլոր գործոնների չեզոքացման հետ: Այսինքն, այդ հարցերին կարելի է անդրադառնալ միայն հանքարդյունաբերության բացասական ազդեցությունների վերացման նպատակով բոլոր իրավական ինստիտուցիոնալ ասպեկտներին անդրադարձ կատարելուց հետո, որոնք, ի դեպ, կարելի է պարզապես արագացնել:

13. **Ռազմավարական նպատակ 12. Համայնքների նկատմամբ հանքարդյունաբերության ոլորտի պատասխանատու մոտեցման ապահովում**

Խնդիր՝ Համայնքների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված սոցիալական պարտավորությունների ընդհանուր պահանջի հստակեցում՝ սահմանելով նվազագույն աջակցության չափ/ձև և ուղղություններ՝ ՏԻՄ-երին մասնակից դարձնելով պարտավորությունների որոշման և սահմանման գործընթացում

Տվյալ խնդրի ներքո կամ հաջորդ նպատակում ամրագրել միջոցառում, որով հնարավոր լինի սահմանափակել կոռուպցիոն գործարքները ընդերքօգտագործողների և կառավարության մարմինների կամ ՏԻՄերի միջև: Հանքարդյունաբերողները մինչև համապատասխան թույլտվությունների ստացումը պետք է իրավունք չունենան իրականացնել համայնքի զարգացմանը կամ այլ բարի նպատակներով ծախսեր, քանի որ դա փաստացի կաշառքի դեր է կատարում:

14. **Ռազմավարական նպատակ 13. Հաշվետվողականության և թափանցիկության խթանում**

Խնդիր՝ Թափանցիկության ու հաշվետվողականության, կորպորատիվ վարքագծի բարելավում

5-րդ կետում նշված է. «Ապահովել ընկերությունների հանրային տեղեկատվության հարթակի առկայություն»: **Առաջարկում ենք նախատեսել նաև ընդերքօգտագործման ընկերությունների կոնտակտների մատչելիություն, որը հնարավորություն կտա հասարակությանը երկխոսության մեջ մտնել նրանց հետ**:

Տվյալ խնդրի ներքո ամրագրել պահանջ, որ ավելացվեն պետության կողմից շրջակա միջավայրի մոնիտորինգային հզորությունները հանքարդյունաբերական տարածքներում և մոնիտորինգային արդյունքները կենդանի ռեժիմով առցանց հրապարակվեն: